Co-funded by the European Union

Migration Partnership Facility

ICMPD
International Centre for Migration Policy Development

People in Need

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2025 ԾԵԿՈՒՅՑ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Բովանդակություն

Հապավումներ 3

Ներածություն 4

Մեթոդաբանություն 5

Հետազոտության նպատակն ու առարկան 5

Հետազոտական գործիքը 6

Հետազոտության ընտրանքը 6

Հետազոտության արդյունքները 7

Ժողովրդագրական տվյալներ 7

Ինտեգրացիա, զբաղվածություն և առկա հիմնախնդիրներ 8

Սոցիալական ծառայություններ, գոհունակության գնահատում և առկա հիմնախնդիրներ 12

Ստացված ծառայությունների արդյունավետության գնահատում 13

Դժվարություններ և խոչընդոտներ 14

Առաջարկություններ 15

Հավելված 1. հետազոտության գործիք 17

Հապավումներ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՄԾ	Միգրացիոն ծառայություն
ՄԿՄ ՀԿ	«Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպություն
ՄՔՄՄԿ	Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն

Ներածություն

2020 թվականին տեղի ունեցած 44-օրյա պատերազմի ու դրան հաջորդած իրադարձությունների հետևանքով Արցախում բնակվող ավելի քան 100.000 քաղաքացիներ բռնի տեղահանվեցին իրենց բնակավայրերից: Նրանց մեծամասնությունը, ըստ վիճակագրական տվյալների, բնակություն հաստատեց Հայաստանի Հանրապետությունում, իսկ փոքր տոկոսը մեկնեց այլ երկրներ:

Այս ցավալի իրողությունն, անշուշտ, մեծ մարտահրավեր էր ոչ միայն բռնի տեղահանված անձանց, այլև Հայաստանի Հանրապետության պետական կառույցների, Տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կառույցների համար՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և հասարակության ներդաշնակ ինտեգրացիայի տեսանկյունից:

Կարելի է փաստել, որ, չնայած մեծ դժվարություններին, հաջողվեց օպերատիվորեն կազմակերպել բռնի տեղահանված անձանց բնակապահովման և առաջին անհրաժեշտության աջակցության տրամադրման աշխատանքները՝ պետական կառույցների, ՏԻՄ-երի, միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական կազմակերպությունների արդյունավետ աշխատանքի և համոգործակցության շնորհիվ: Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից ներդրվեցին բռնի տեղահանված անձանց ուղղված մի քանի ծրագրեր (օրինակ՝ միանվագ 100.000 դրամ աջակցություն, բնակապահովման, բնակության ծախսերի փոխհատուցման 40.000+10.000 դրամ ծրագրերը և այլն): Զուգահեռաբար, ՏԻՄ-երի, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից շարունակվում էին/են տրամադրվել տարատեսակ օգնություններ:

Ուսումնասիրելով, սակայն, բռնի տեղահանված անձանց տրամադրված սոցիալական ծառայությունների դինամիկան, կարող ենք փաստել, որ ժամանակի ընթացքում դրանց մի մասը դադարեցվել են կամ կարգի փոփոխությամբ պայմանավորված՝ թիրախավորել շահառուների ավելի նեղ շրջանակի:

Այս հետազոտության նպատակն է՝ բացահայտել Արցախից բռնի տեսահանված անձանց պետական և ՏԻՄ մակարդակում տրամադրված սոցիալական ծառայությունների արդյունավետությունը, գնահատել, թե դրանք որքանով են լուծել շահառուների կարիքները,

բացահայտել առկա հիմնախնդիրներն ու ներկայացնել ծառայությունների բարելավման առաջարկություններ: Հետազոտության ընտրանքն ընդգրկել է Տավուշի մարզի Նոյեմբերյան և Կոտայքի մարզի Աբովյան համայնքներում բնակվող բռնի տեղահանված 151 անձանց, որոնց հետ իրականացվել են ձևայնացված (ստանդարտացված) հարցումներ:

Սույն հետազոտությունը բաղկացած է «Մեթոդաբանություն», «Հետազոտության արդյունքներ», «Առաջարկություններ» և «Հավելված» բաժիններից:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է Կոտայքի մարզի Աբովյան և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում: Համայնքների ընտրությունը պայմանավորված է հետևյալ սկզբունքով. Կոտայքը ամենամեծ թվով արցախցիներ «հյուրընկալած» մարզերից մեկն է, Աբովյան-ը՝ մարզի՝ մայրաքաղաք Երևանին ամենամոտ համայնքներից, մինչդեռ Տավուշի մարզում և Նոյեմբերյան համայնքում, մասնավորապես, հակառակ պատկերն է: Սա հնարավորություն է տվել հետազոտության ընտրանքը դարձնել ավելի լայն և հետազոտության առարկայի տեսանկյունից՝ առավել հետաքրքրական և բազմազան:

Հետազոտությունն ընդգրկել է հետևյալ փուլերը.

1. **Իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն**, մասնավորապես՝ միգրացիային վերաբերող օրենսդրություն, բռնի տեղահանված արցախցիներին տրամադրվող սոցիալական ծառայությունների վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշումներ:
2. Աբովյան և Նոյեմբերյան համայնքներում բնակվող 151 արցախցիների շրջանում ձևայնացված (ստանդարտացված) հարցաշարով **հետազոտության իրականացում**:
3. Հետազոտության արդյունքների վերլուծություն, հիմնախնդիրների բացահայտում:
4. Սոցիալական ծառայությունների բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում:

Հետազոտության նպատակն ու առարկան

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել, թե.

- Բռնի տեղահանումից ի վեր արցախցիները պետական և ՏԻՄ մակարդակով ինչպիսի՞ սոցիալական ծառայություններ են ստացել:
- Որքանո՞վ են դրանք եղել հասցեական և թիրախային, և լուծե՞լ են, արդյոք, առկա հիմնախնդիրները:
- Որքանո՞վ են շահառուները գոհ ստացված ծառայություններից:
- Ինչպիսի՞ հիմնախնդիրներ են առկա արցախցիների շրջանում, որոնք դեռևս լուծման կարիք ունեն:
- Ինչպե՞ս կարելի է բարելավել սոցիալական ծառայությունների որակն ու հասցեականությունը:

Հետազոտական գործիքը

Վերոնշյալ հետազոտական հարցերի հիման վրա մշակվել է ձևայնացված (ստանդարտացված) հարցաշար (տես՝ Հավելված 1), որը պարունակել է հետևյալ հիմնական բաժինները.

- Ժողովրդագրական տվյալներ:
- Շահառուների զբաղվածություն/ֆինանսական վիճակ:
- Ստացված սոցիալական ծառայություններ և դրանց նկատմամբ գոհունակության գնահատում, առկա հիմնախնդիրների բացահայտում:
- Սոցիալական ծառայությունների բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Մինչ հիմնական հետազոտության անցկացումը՝ գործիքն անցել է նախնական փորձարկում ընտրանքի ծավալի 7%-ի չափով, որի հիման վրա կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ:

Հետազոտության ընտրանքը

Ընտրանքն իրականացվել է բազմաստիճան չկրկնվող հավանականային մեթոդով՝ ընդգրկելով Աբովյան և Նոյեմբերյան համայնքներից ընդհանուր 151 հարցվող: Որպես ընտրանքի միավոր դիտարկվել է տնային տնտեսությունը, հետևաբար յուրաքանչյուր հարցվող ներկայացրել է 1 տնային տնտեսության վերաբերյալ տվյալներ:

Նախնական փուլում ստացել ենք Աբովյան և Նոյեմբերյան համայնքներում բնակվող արցախցիների վերաբերյալ քանակական տվյալներ՝ ըստ բնակավայրերի տեղաբաշխման: Ձևավորված ընտրանքային բազմությունը տրոհվել է երկու ենթաբազմությունների՝ քաղաքային և գյուղական բնակավայրեր: Ընտրանքի հաշվարկման հիմքում ընկած է վստահելիության միջակայքի 95% ցուցանիշը: Սահմանային սխալը կազմել է +/-7.5%:

Հարցումներն իրականացվել են անհատական եղանակով և անանունության սկզբունքով:

Հետազոտության արդյունքները

Ժողովրդագրական տվյալներ

Հետազոտությանը մասնակցել է Աբովյան և Նոյեմբերյան համայնքից համապատասխանաբար 137 և 14 անձ, որոնցից 43-ը՝ գյուղական բնակավայրերից, իսկ 108-ը՝ քաղաքային:

Հարցվածների 76.2%-ը կանայք են, 23.8%-ը՝ տղամարդիկ: Տարիքային բաշխվածությունը՝

Աղյուսակ 1. Հարցվողների տարիքը



Աղյուսակ 2. Ընտանեկան դրությունը



Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արցախցի ընտանիքների մեծ մասը բազմանդամ են: Մասնավորապես՝ հարցված տնային տնտեսությունների 62.3%-ում ապրում են 5 և ավելի անձինք: 16.6%-ի պարագայում ընտանիքը բաղկացած է 4 անձից, 11.9%-ը՝ 3 անձ: Սա կարևոր է այն համատեքստում, որ սոցիալական (կենցաղային, ֆինանսական) դժվարությունները առավել սուր դրսևորումներ են ստանալ բազմանդամ ընտանիքներում՝ հատկապես ընտանիքում անչափահասների առկայության պարագայում: Ուշագրավ է, որ հետազոտության մասնակից ընտանիքներից 79.5%-ում կան անչափահաս երեխաներ, ընդ որում՝ 25.8%-ը՝ 3, 29.1%-՝ 2 երեխա և 24.5%- ընտանիքներում՝ 1 երեխա:

Ինտեգրացիա, զբաղվածություն և առկա հիմնախնդիրներ

Մեր հետազոտության տեսանկյունից կարևորել ենք նաև պարզել, թե որքա՞ն ժամանակ են հարցվողները բնակվում տվյալ համայնքում և արդյոք ունե՞ն զբաղվածություն: Հարցվածների ճնշող մեծամասնությունը (73.5%) բնակվում է տվյալ համայնքում 1-2 տարի, ևս և միայն 4.6%-ը՝ 2 տարուց ավելի, 13.2%-ը՝ 6-11 ամիս և միայն 8.6%-ը՝ մինչև 6 ամիս: Սա վկայում է այն մասին, որ հարցվածների մեծամասնությունն ակնհայտորեն ինտեգրվել է համայնքում, այն դիտարկում է որպես երկարատև կացության միջավայր: Սա, իհարկե, կարող է նպաստավոր գործոն է լինել ոչ միայն հարցված արցախցիների՝ «նոր» միջավայրին ինտեգրվելու, այլև այդ միջավայրում աշխատանքային զբաղվածության խնդիրները լուծելու տեսանկյունից:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընտանիքների 69.5%-ում առնվազն մեկ անձ աշխատում է, մինչդեռ 30.5%-ում ոչ ոք չի աշխատում: Այն, որ հարցվածների մոտ 1/3-ը կամ նրա ընտանիքի անդամները չունեն աշխատանք, բավականին մտահոգիչ փաստ է: Ընդ որում, տնային տնտեսությունների 46.4%-ի պարագայում աշխատում է միայն ընտանիքի 1 անդամ, 16.6%-ում՝ երկու անձ և 6.7%-ում՝ երեք և ավելի անձ:

Աղյուսակ 3. Ընտանիքի անդամներից քանի՞ անձ է աշխատում:



Աղյուսակ 4. Ո՞ր ոլորտներում են աշխատում



Սա, համադրելով այն փաստի հետ, որ հարցված տնային տնտեսությունների 62.3%-ն ունի 5 և ավելի անդամ, կարող ենք պնդել, որ ընտանիքներից շատերը խոցելի են ֆինանսական տեսանկյունից, հատկապես՝ հետևյալ եկամուտներ ունենալու պարագայում.

Աղյուսակ 5. Ընտանիքի եկամուտները



Հատկանշական է, որ՝ հարցված ընտանիքների 56.3%-ի ամսական եկամուտը չի գերազանցում 300.000 դրամը, և միայն 27.2%-ի եկամուտն է 400.000 դրամից բարձր: Հաշվի առնելով ընտանիքների միջին չափը (4-5 անձ), մեկ շնչի հաշվով միջին եկամուտը շատ ցածր է: Այս պատճառով հարցված ընտանիքների մեծամասնության մոտ առկա ֆինանսական հիմնախնդիրները շարունակում են մնալ չլուծված:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արցախցիների ճնշող մեծամասնությունը (94.7%) բռնի տեղահանումից հետո բախվել է ֆինանսական/կենցաղային խնդիրների: Ընդ որում, նրանցից միայն 14.6%-ը է խնդիրներ ունեցել տեղահանումից սկսած առաջին 6 ամիսների ընթացքում, իսկ 80.1%-ի պարագայում դրանք շարունակվում են մինչ օրս:

Աղյուսակ 6. Ինչպիսի՞ խնդիրների են բախվել հարցված արցախցիները



Տվյալները ցույց են տալիս, որ հիմնական դժվարությունները եղել են՝ բնակարանային ապահովում (89.5%), զբաղվածություն/աշխատանք (69.2%), սննդի (38.5%) և հագուստի (35.0%) ձեռքբերում, որոնք առաջնային նշանակության կենսական հարցեր են:

Աղյուսակ 7. Ինչպե՞ս կգնահատեք ներկայում Ձեր ընտանիքի սոցիալական/ֆինանսական վիճակը.



Հարցվածների միայն 4%-ն է գնահատել իր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը որպես «լավ», 6%-ը՝ «շատ վատ», մոտ 1/3-ը՝ «վատ», իսկ կեսից ավելին՝ «ոչ վատ, ոչ լավ»: Ընդ որում, վերջիններիս հետ անձնական զրույցների ժամանակ պարզ դարձավ, որ ֆինանսական «ոչ լավ, ոչ վատ» վիճակը մեծ մասամբ հնարավոր եղել ապահովել պետական մարմինների, ՏԻՄ-ի և հասարակական կառույցների կողմից ստացված աջակցության և սոցիալական ծառայությունների միջոցով է:

Սոցիալական ծառայություններ, գոհունակության գնահատում և առկա հիմնախնդիրներ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցված բոլոր 151 արցախցիները (100%) բռնի տեղահանումից հետո ստացել են որևէ տեսակի սոցիալական ծառայություն կամ աջակցություն պետական մարմինների, ՏԻՄ-ի կամ ՀԿ-ների կողմից: Պետական մարմինների կողմից ստացված առավել տարածված ծառայություններ են եղել՝

- Բնակարանային ապահովման «40.000+10.000 դրամ» աջակցությունը (96.7%)
- Միանվագ 100.000 դրամ աջակցությունը (92.7%)
- Սննդի և հագուստի տրամադրման աջակցությունը (88.7%)
- Առողջապահական աջակցությունը (50.3%)

Աղյուսակ 8. Ինչպիսի՞ սոցիալական ծառայություն/աջակցություն եք ստացել



Որոշ դեպքերում արցախցիները ստացել են նաև վառելափայտի, տարբեր խանութների քարտերի կամ, օրինակ, ջերմոցի տրամադրման ծառայություններ, սակայն դրանք շատ փոքր տոկոս են կազմել և էական ազդեցություն չեն ունեցել վերջիններիս կենսամակարդակի ապահովման տեսանկյունից:

Առկա սոցիալական ծառայությունների և հնարավորությունների մասին հարցվածները տեղեկանում են հիմնականում հետևյալ աղբյուրներից.

Աղյուսակ 9. Ինչպե՞ս եք տեղեկացել պետական կամ տեղական աջակցության ծրագրերի մասին



Ստացված ծառայությունների արդյունավետության գնահատում

Մեր հետազոտության տեսանկյունից կարևորագույն հարցերից մեկը ստացված սոցիալական ծառայություններից շահառուների գոհունակությունն է և այն, թե արդյոք ստացված ծառայությունները լուծե՞լ են ունեցած խնդիրները:

Ըստ ստացված ծառայությունների մեծամասնության՝ ստացվել է հետևյալ պատկերը.

Միանվագ 100.000 դրամ աջակցություն

Հարցվածների 77.7%-ը գնահատել է այն որպես արդյունավետ (6-10 միավոր[1]), ընդ որում 53.2%-ը նշել է, որ այն ամբողջությամբ լուծել է իրենց խնդիրը: Հարցվածների միայն 22.3%-ն է ծառայությունը գնահատել ցածր՝ 1-ից-5 միավոր սանդղակով: Այս ծառայության պարագայում անհրաժեշտ է նշել, որ այն պետք է դիտարկել կարճաժամկետ տեսանկյունից, քանի որ այն ի սկզբանե պետության կողմից նախատեսվել է որպես հրատապ, այսրոպեական խնդիր լուծելու գործիք: Եվ, ինչպես փաստում են հետազոտության արդյունքները, շահառուների մեծամասնությունը դրական է արտահայտվել դրա վերաբերյալ:

Բնակարանային ապահովման ծախսերի փոխհատուցման «40.000+10.000 դրամ» աջակցություն.

[1] Գնահատման համար կիրառվել է 10 բալային շեմ, որտեղ 1-ը՝ գոհունակության նվազագույն, իսկ 10-ը՝ առավելագույն շեմն է:

Ծառայությունից օգտված անձանց 75.9%-ը գնահատել է այն որպես արդյունավետ, որից 51.7%-ը նշել է, որ այն ամբողջությամբ լուծել է իրենց խնդիրը: 24.1%-ը գնահատել է ցածր՝ 1-5 բալային սանդղակում:

Ժամանակավոր կացարանների վարձակալության նպատակով յուրաքանչյուր անձին տրամադրվող 40.000 դրամի, իսկ կոմունալ վճարների նպատակով՝ 10.000-ական դրամի տրամադրման այս ծրագիրը, պետք է նշել, որ բավականին նպաստավոր է եղել արցախցիների կացության հիմնախնդրի լուծման տեսանկյունից, սակայն հատկացվող գումարների նվազեցման վերաբերյալ հետագայում հայտարարված մոտեցումն առաջ է բերել որոշակի դժգոհություններ շահառուների շրջանում: Այս հանգամանքն անհանգստացնում է հատկապես զբաղվածության խնդիր ունեցող շահառուներին, որոնք մտավախություն ունեն, որ այլևս ի վիճակի չեն լինի վարձակալել ներկայիս կացարանները: Այս իրողությունը կարևոր է վերոնշյալ 24.1%-ի կողմից ստացված ծառայության արդյունավետությունը համեմատաբար ցածր գնահատելը հասկանալու տեսանկյունից. վերջիններս ոչ այնգամ անարդյունավետ են համարում ինքնին ծրագիրը, այլև դրանում կատարված փոփոխությունները:

Սննդի և հագուստի տրամադրման աջակցություն

Հարցվածների 54.1%-ն այս ստացված աջակցությունը գնահատել է որպես արդյունավետ, ըն որում 28.6%-ի պարագայում այն ամբողջությամբ լուծել է շահառուների խնդիրները: 45.9%-ից 28.6%-ը ծառայության արդյունավետությունը գնահատել է 5 բալով (ոչ լավ, ոչ վատ) և միայն 17.3%-ն է այս աջակցության արդյունավետությունը գնահատել է 5-ից ցածր բալով:

Քանի որ այս ծառայությունը/աջակցությունը չի տրամադրվել անմիջականորեն պետական մարմինների կողմից, այլ, առավելապես, ՏԻՄ-երի, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից, այն չի կրել համատարած բնույթ և գուցե չի տարածվել բոլոր շահառուների վրա: Հետևաբար, կարող են լինել շահառուներ, որոնք չեն ստացել բավարար ծավալով աջակցություն կամ այն չի լուծել իրենց ունեցած հիմնախնդիրները:

Հոգեբանական և առողջապահական աջակցություն

Չնայած ցածր ընդգրկվածությանը, այս ծառայությունները ստացած անձանց մեծամասնությունը դրանք գնահատել է դրական: Հոգեբանական աջակցություն ստացածների՝ 88.5, և առողջապահական աջակցություն ստացածների 88 տոկոսը գնահատել են այն որպես արդյունավետ:

Դժվարություններ և խոչընդոտներ

Հարցվածների 47.7%-ը նշել է, որ չի հանդիպել որևէ խոչընդոտի ծառայություններից օգտվելիս: Սակայն մնացածները մատնանշել են խնդիրներ, որոնք դժվարեցնում կամ խոչընդոտում են սոցիալական ծառայությունների պատշաճ ստացումը.

Աղյուսակ 10. Ինչպիսի՞ դժվարությունների և կամ խոչընդոտների եք հանդիպել սոցիալական ծառայություններ ստանալիս



Հարցվողների կողմից սոցիալական ծառայությունների բարելավման ուղղությամբ հնչել են հետևյալ առաջարկությունները.

Աղյուսակ 11. Ինչպիսի՞ առաջարկություններ ունե՞ք աջակցության ծրագրերի բարելավման վերաբերյալ



Առաջարկություններ

Ամփոփելով վերոնշյալ բաժիններում իրականացված հետազոտությունը, ցանկանում ենք ներկայացնել առաջարկություններ, որոնք կարող են ավելի հասցեական և

արդյունավետ դարձնել բռնի տեղահանված արցախցիներին ուղղված սոցիալական ծառայությունները.

1. **Կարճաժամկետ նպատակային ծրագրերից աստիճանաբար անցում կատարել երկարաժամկետ ազդեցության ծրագրերին:**

Հետազոտության գրեթե բոլոր մասնակիցները բարձր են գնահատել պետական, ՏԻՄ և այլ մակարդակներում իրականացվող սոցիալական ծառայությունների կարևորությունն ու դրանց դրական ազդեցությունն իրենց կյանքում: Նույնիսկ այն հարցվողների մեծամասնությունը, որը բողոքում էր «40.000+10.000 դրամ» ծրագրի ծավալների և թիրախային խմբի փոփոխության քաղաքականությունից, այն համոզմունքով էր խոսում, որ ներկա սոցիալական ծառայությունները թեպետ իրենց համար կենսական նշանակության հարցեր են լուծում, սակայն իրենք էլ են հասկանում, որ դրանք անվերջ շարունակվել չեն կարող: Եղած ծառայությունների, ծրագրերի շարունակությունը և կամ նորերի ներդրումը նրանք ցանկանում էին հիմնականում մեկ նպատակով՝ հասնել կենսամակարդակի որոշակի կայուն վիճակի, որից հետո արդեն իրենք կկարողանան ինքնուրույն կերպով լուծել իրենց հիմնախնդիրները:

2. **Այս համատեքստում 2-րդ կարևորագույն առաջարկությունը բռնի տեղահանված արցախցիների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի խթանմանն է վերաբերում:**

Հարցվածներից շատերը պնդում են, որ իրենք նախընտրում են ունենալ կայուն աշխատանք բավարար վարձատրությամբ, քան անընդհատ սպասել պետական աջակցության ծրագրերին: Այս տեսանկյունից թերևս բացառություն են միայն տարեցներն ու առողջական որոշակի խնդիրներ ունեցողները, ովքեր մյուսներից առավել ունեն պետության հոգածության կարիքը:

Կարևոր է նշել նաև, որ որոշ հարցվածներ զբաղվածության համատեքստում կարևորում են նոր մասնագիտության ձեռքբերումը, վերապատրաստումները՝ նշելով, որ դա կարող է նպաստել իրենց մրցունակության բարձրացմանը:

3. Բնակարանային ապահովվածության ծրագրերի վերանայում

Ներկայում պետության կողմից իրականացվում են 2՝ «Ժամանակավոր կացարաններում բնակվելու և կոմունալ ծախսերի վճարման համար 40.000+10.000» աջակցության տրամադրման և «Բնակարանային ապահովման» պետական ծրագրերը: Վերջինս ենթադրում է բռնի տեղահանված արցախցիների ընտանիքների յուրաքանչյուր անդամի հաշվով 5-ից մինչև 2 մլն աջակցություն՝ պայմանավորված աշխարհագրական գոտիականությամբ:

Այս երկու ծրագրերը, հասկանալի է, որ տարբեր խնդիրներ են լուծում, սակայն մեր հետազոտության արդյունքներն ու հարցվածների հետ ոչ ֆորմալ շփումները թույլ են տալիս պնդել, որ երկարաժամկետ հեռանկարում լավագույն լուծում կարող է լինել «Բնակարանային ապահովման» ծրագիրը, քանի որ մյուսը պարզապես խնդիրների ժամանակավոր լուծման գործիք է, որը շահառուներին թողնում է պետությունից անընդհատ կախվածության մեջ:

4. Պետական վարչարարության բարելավում

Անհրաժեշտ է շարունակականորեն բարելավել պետական վարչարարության համակարգն ու ներդնել ժամանակակից մոտեցումներ և գործիքներ: Սակայն, մինչ այդ, անհրաժեշտ է ուսումնասիրել և քարտեզագրել այն խնդիրները, որոնք ունեն իրավական լուծում, սակայն հնարավոր չեն դառնում բարդ, ժամանակատար պետական վարչարարության հետևանքով:

Հետազոտության շրջանակներում, որպես նման օրինակներ, հաճախ նշվում էին անձնագրային բաժանմունքները, թոշակների և նպաստների ստացման համար ՄՄԾ-ների կողմից պահանջվող փաստաթղթաշրջանառության բարդությունները և այլն: Անհրաժեշտ է, որ ընդհանուր վարչարարության բարելավմանը զուգահեռ այս պահին իրականացնել հրատապ խնդիրների լուծմանն ուղղված օպերատիվ աշխատանքներ:

Հավելված 1. հետազոտության գործիք

Ներածական մաս

Բարև Ձեզ, ես_____ (անուն) եմ,

մենք անցկացնում ենք ուսումնասիրություն՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված անձանց համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող/տրամադրված սոցիալական ծառայությունների որակի և արդյունավետության գնահատմանը: Ձեր պատասխանները շատ կարևոր են մեզ համար: Հարցաշարի լրացումը կտևի մոտ 10-15 րոպե: Ձեր բոլոր պատասխանները կպահպանվեն գաղտնի և կօգտագործվեն միայն ընդհանուր վիճակագրական տվյալների մշակման համար:

Հարցումն անկացնում է «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ-ն «Իրազեկ հանրություն, արդյունավետ սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի «Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակում: Այն համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) շրջանակում և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) միջոցով:

Հարցաթերթիկի հերթական համար_____(հարցազրուցավարներին՝ չլրացնե՛լ)
Հարցազրուցավարի կոդը_____

1. Ընդհանուր տվյալներ

1.1. Ձեր տարիքը:

1. 18-25

2. 26-35
3. 36-44
4. 45-54
5. 55-63
6. 63-ից բարձր

1.2. Ձեր սեռը:

- Արական
- Իգական

1.3. Ընտանեկան դրությունը:

1. Ամուսնացած
2. Չամուսնացած
3. Ամուսնալուծված
4. Ամուրի/այրի

1.4. Ձեր ընտանիքում քանի՞ անձ է բնակվում:

_____

1.5. Ընտանիքի անդամներից քանի՞սն են անչափահաս (մինչև 18 տարեկան):

_____

1.7 Քանի՞ ամիս է, ինչ բնակվում եք այս համայնքում: _____

2. Զբաղվածություն/ֆինանսական հիմնախնդիրներ

2.1. Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները աշխատո՞ւմ եք:

1. Այո
2. Ոչ (անցում 2.4 հարցին)

2.2. Եթե այո, ընտանիքի անդամներից քանի՞ անձ է աշխատում:

_____

2.3. Ո՞ր ոլորտներում են աշխատում:

1. Պետական/ՏԻՄ, որպես _____
2. Կրթություն, որպես _____
3. Առևտուր, որպես _____
4. Սպասարկում, որպես _____
5. Արտադրություն, որպես _____
6. Այլ_____ (նշել)

2.4. Ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտը (դրամ)՝ ներառյալ աշխատավարձ, աջակցության գումարներ, օգնություն հարազատներից և այլն:

1. մինչև 100.000
2. 100.001-200.000
3. 200.001-300.000
4. 300.001-400.000
5. 400.001-500.000
6. 500.000-ից ավելի:

2.5. Բռնի տեղահանությունից հետո Ձեր ընտանիքը բախվե՞լ է ֆինանսական/կենցաղային խնդիրների:

1. Այո, տեղափոխությունից սկսած առաջին 6 ամիսների ընթացքում
2. Այո, տեղափոխությունից սկսած ամբողջ ժամանակահատվածում
3. Ոչ (անցում 2.7 հարցին)

2.6. Եթե այո, խնդրում ենք նշել, թե ինչպիսի՞ դժվարությունների եք հանդիպել:

1. Բնակարանային ապահովում:
2. Զբաղվածություն/աշխատանք:
3. Սննդի ձեռքբերում:
4. Հագուստի ձեռքբերում:
5. Այլ_____ (նշել)

2.7. Ինչպե՞ս կգնահատեք ներկայում ձեր ընտանիքի սոցիալական/ֆինանսական վիճակը.

1. Շատ վատ:
2. Վատ:
3. Ոչ վատ, ոչ լավ:
4. Լավ:
5. Շատ լավ:

3. Տրամադրված սոցիալական ծառայությունների գնահատում

3.1. Բռնի տեղահանված արցախցիներին պետական կամ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող/տրամադրված ի՞նչ ծառայությունների մասին եք տեղեկացված (նշել հնարավոր բոլոր պատասխանները):

1. Միանվագ 100.000 դրամ աջակցությունն:
2. Բնակարանային ապահովման «40.000+10.000 դրամ» աջակցություն:
3. Բնակարանի/առանձնատան ձեռքբերման և կամ կառուցապատման նպատակով տրամադրվող ֆինանսական աջակցություն:

4. Այլ_____
_____
___
5. Այլ_____
_____
___

3.2. Ինչպե՞ս եք տեղեկացել պետական կամ տեղական աջակցության ծրագրերի մասին (նշել հնարավոր բոլոր տարբերակները):

1. Հեռուստատեսությամբ:
2. Տպագիր կամ ինտերնետային լրատվամիջոցներից:
3. Պետական մարմինների կայքերից/որոշումներից:
4. ՏԻՄ-ի կողմից:
5. Ընկերներից/ծանոթներից/բարեկամներից:
6. Հասարակական կազմակերպությունների կողմից:
7. Այլ_____

3.3. Բռնի տեղահանումից ի վեր, ստացե՞լ եք որևէ տեսակի սոցիալական ծառայություն/աջակցություն պետական մարմինների, ՏԻՄ-ի կամ հասարակական կազմակերպությունների կողմից

1. Այո
2. Ոչ *(անցում կատարել 3.6 հարցին)*

3.4. Եթե այո, ինչպիսի՞ աջակցություն/ծառայություն եք ստացել (նշել հնարավոր բոլոր տարբերակները):

1. Միանվագ 100.000 դրամ աջակցություն:
2. Բնակարանային ապահովության «40,000 + 10,000 դրամ» աջակցությունը:

3. Բնակարանի ձեռքբերման/կառուցման ծրագիր:
4. Սննդի, հագուստի տրամադրման աջակցություն:
5. Հոգեբանական աջակցություն:
6. Առողջապահական աջակցություն
7. Այլ_____ (նշել)

3.5 Որքանո՞վ են վերևում նշված, ստացված սոցիալական ծառայությունները/աջակցության ծրագրերը լուծել ձեր ունեցած խնդիրները: Գնահատեք 1-10 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ ընդհանրապես չի լուծել, իսկ 10-ն՝ ամբողջությամբ լուծել է խնդիրը:

3.4 հարցում նշված պատասխանի հերթական համարը	Գնահատականը 1-10 բալով

3.6. Ինչպիսի՞ սոցիալական ծառայություններ կցանկանայիք ստանալ, որոնք այս պահին չեն տրամադրվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

3.7. Ինչպե՞ս կգնահատեք պետական մարմինների կողմից տրամադրված/տրամադրվող սոցիալական ծառայությունների մատուցման որակը:

1. Շատ վատ _____ (նշել ստացված ծառայության անվանումը)
2. Վատ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
3. Ոչ վատ, ոչ լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
4. Լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
5. Շատ լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)

3.8. Ինչպե՞ս կգնահատեք Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված/տրամադրվող սոցիալական ծառայությունների մատուցման որակը:

1. Շատ վատ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
2. Վատ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
3. Ոչ վատ, ոչ լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)
4. Լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)

5. Շատ լավ:_____ (նշել ստացված ծառայության անվանումը)

3.9 Ինչպիսի՞ խոչընդոտների կամ խնդիրների եք հանդիպել աջակցության ծրագրերից օգտվելիս (նշել հնարավոր բոլոր տարբերակները):

1. Չեմ հանդիպել
2. Անհարգալից կամ խտրական վերաբերմունք:
3. Հերթեր:
4. Բարդ ու անհասկանալի թղթաբանություն:
5. Ոչ պատշաճ իրազեկում:
6. Տրամադրված/տրամադրվող ծառայությունների ուշացում:
7. Այլ (նշել)_____

3.10. Ինչպիսի՞ առաջարկություններ ունե՞ք աջակցության ծրագրերի բարելավման վերաբերյալ:

1. Չունեմ
2. _____
_____
_____
_____
_____
_____
_____

3.8 Բռնի տեղահանումից ի վեր երբևէ ստացե՞լ եք որևէ առողջապահական ծառայություն:

1. Այո (նշել՝ ինչպիսի ծառայություն և ում կողմից)_____
_____
____
2. Ոչ (անցում 4-րդ բաժին)

3.9. Եթե այո, ինչպե՞ս կգնահատեք ստացված ծառայության որակը

1. Շատ վատ:
2. Վատ:
3. Ոչ վատ, ոչ լավ:
4. Լավ:
5. Շատ լավ:

4. Կոնտակտային տվյալներ

Խնդրում ենք ցանկության դեպքում նշել Ձեր կոնտակտային տվյալները՝ անհրաժեշտության դեպքում հետադարձ կապի և հարցազրուցավարի աշխատանքի ստուգման համար.

- Անուն, ազգանուն: _____
- Հեռախոսահամար: _____
- Էլ. փոստի հասցե (եթե ունեք): _____

Շնորհակալություն Ձեր ժամանակի և մասնակցության համար: Ձեր պատասխանները շատ կարևոր են մեր հետազոտության համար:

Հետազոտությունն իրականացվել է «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ «Իրազեկ հանրություն, արդյունավետ սոցիալական ծառայություններ» ծրագրի համատեքստում՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի «Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակում:
Այն համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) շրջանակում և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) միջոցով:
Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության կամ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի տեսակետները:

2025 ԶԵԿՈՒՅՑ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒՄՆԵՐ